ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱՐՍԱՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(04 հունվարի, 2015 թ.)

Սիրելի՛ հավատացյալ քույրեր եւ եղբայրներ,

Աստվածաշունչը ուշադիր ընթերցելիս անդրադառնում ենք, որ Սուրբ Գրքում կարեւորագույն թեմաներից մեկը ճամփորդության թեման է: Նկատե՞լ եք, թե աստվածաշնչյան մարդիկ որքան հաճախ են փոխում իրենց բնակության վայրը: Դժվար է Սուրբ Գրքում գտնել մի կերպար, որն իրապես երկխոսության մեջ է Աստծո հետ եւ շարունակում է մնալ իր բնակության վայրում: Երբեմն եւ շատ հաճախ Աստված Ինքն է հորդորում՝ ասելով. «Թո՛ղ քո բնակության վայրը, քո տունը եւ գնա՛ այն երկիրը, որը ցույց կտամ»:

Աստվածաշունչ մատյանը մարդու կյանքի ճամփորդության մասին է: Եթե բացեք Նոր Կտակարանի Գործք Առաքելոց գիրքը, որը քրիստոնեական Եկեղեցու սկզբնավորման, նրա ծագման պատմությունն է, կտեսնեք, որ վաղ Եկեղեցու նախնական անուններից մեկը «ճանապարհ» էր: Պողոս առաքյալն իրեն համարում է Ճանապարհի հետեւորդ՝ Հիսուսի խոսքի համաձայն. «Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը եւ Կյանքը» (Հովհ. ԺԴ. 6): Ավետարանը ճանապարհի պատմություն է: Հիսուսի աշակերտներն իրենց ողջ կյանքն անցկացրին ճանապարհներին՝ հետեւելով Նրա խոսքին. «Վերցրե՛ք ձեր խաչը եւ եկե՛ք իմ հետեւից» (հմմտ. Ղուկ. ԺԴ. 27), այնուհետեւ Հիսուսի համբարձումից հետո ամբողջ աշխարհով տարածելով փրկության Ավետարանը:

Հիսուս ինքը ծնվեց ճանապարհին: Այս պահին, երբ պատարագում եւ քարոզ ենք խոսում, Ս. Կույս Մարիամն ու Հովսեփը ճանապարհ են ելել՝ Բեթղեհեմ գնալու համար: Նազարեթից Բեթղեհեմ 130 կիլոմետր է. չորս օր, ավանակին նստած՝ պիտի քայլեն Հովսեփն ու Աստվածամայրը եւ վաղը երեկոյան պիտի հասնեն Բեթղեհեմ, որտեղ պիտի ծնվի մանուկ Հիսուսը:

Ս. Ծննդյան պատմությունը եւս ճանապարհորդության մասին է: Աստվածորդու ծննդյան պատումի մեջ բոլոր կերպարները շարժման մեջ են:

Մարիամը եւ Հովսեփը ճամփորդում են: Մոգերը՝ Արեւելքից եկած իմաստուն մարդիկ, արդեն երկու տարի է ճանապարհին են եւ վաղը պիտի հասնեն Բեթղեհեմ: Հովիվները լեռների վրա արածեցնում են իրենց գառնուկներին, եւ վաղը լսելով հրեշտակների ավետիսը՝ պիտի ասեն. «Եկէ՛ք գնանք մինչեւ Բեթղեհէմ եւ տեսնենք, թէ ի՞նչ բան է այս եղածը, որ Տէրը մեզ ցոյց տուեց»:

Մեր կյանքը, սիրելինե՛ր, ճամփորդություն է, առավել եւս՝ հավատքի կյանքը: Ոմանց համար այն սկսվում է կասկածների խաչմերուկից եւ գնում դեպի անհավատության փակուղի, իսկ ոմանց համար կասկածանքի այդ նույն խաչմերուկից ուղղում է դեպի հավատքի օրրան՝ Բեթղեհեմի մսուրը:

Մենք, լինելով ավանդաբար քրիստոնյա ազգ, հավատքի մարդիկ, շատ հաճախ կասկածում ենք, հարցադրումներ ենք անում, եւ սա շատ բնական է: Վստահեցնեմ ձեզ՝ Ս. Գիրքն ընդհանրապես եւ Ս. Ծննդյան պատմությունն ի մասնավորի լի են հարցադրումներով: Երբ Հովսեփն իմացավ, որ Ս. Կույսը հղի է, նրան մտատանջող մեծագույն հարցն էր՝ ի՞նչ անել, ինչպե՞ս վարվել: Երբ Աստվածամայրն ստացավ հրեշտակի ավետիսը, հարցրեց. «Ինչպե՞ս այդ կպատահի ինձ» (Ղուկ. Ա. 34): Մոգերը, Արեւելքից գալով, հարցնում էին, թե որտեղ է ծնվել արքան: Հովիվները զարմացած հարցնում են մեկը մյուսին՝ այս ինչ պատմություն է, ի՞նչ հրաշք է, որ Տերը մեզ ցույց տվեց:

Սակայն Ս. Ծննդյան նախօրեին կցանկանայի, որ մեզ բոլորիս մտատանջեր եւ հուզեր կարեւոր ու էական մեկ հարց՝ ո՞րն է Բեթղեհեմի ճամփան, ինչպե՞ս պիտի քայլենք, ո՞ր ճանապարհով՝ վաղը երեկոյան Բեթղեհեմում լինելու համար:

Բարեբախտաբար, Բեթղեհեմ հասնելու համար Աստվածաշունչը մի քանի ճանապարհ է մեզ ցույց տալիս: Առաջինը Մատթեոս ավետարանիչն է նկարագրում՝ Արեւելքից եկած իմաստուն մոգերի օրինակով. նրանք Արեւելքի, հավանաբար նաեւ մեր պատմական Հայաստանի այն իմաստուններն էին, որոնք ուսումնասիրում էին աստղերը, մոլորակների պտույտը եւ գուշակություններ անում: Մոգերը համարվում էին ժամանակի մտավոր խավը: Սա հուշում է, որ ոմանք կարող են Բեթղեհեմի մսուր հասնել գիտության, ուսումնասիրության, իմացության ճանապարհով: Վստահաբար, շատ եք լսել, թե հսկայական անջրպետ գոյություն ունի կրոնի եւ գիտության միջեւ: Հատկապես աստվածմերժության տարիներին էին գիտնականները պնդում, թե գիտուն մեկը չի կարող հավատացյալ լինել: Սակայն մեր փորձառությունից գիտենք, որ շատ շատերը գտել են Բեթղեհեմի ճանապարհը իմացականության շնորհիվ: Այո՛, գիտնական մեկը կարող է հավատացյալ լինել, եւ այսօր էլ շատ առաջատար գիտնականներ մեծ հավատքի տեր են: Այն մարդիկ, այն գիտնականները, ովքեր աչք ունեն տեսնելու եւ հետեւելու Տիրոջ լույսին, նրանք հասնում են Բեթղեհեմ, ու գիտությունը ոչ թե խանգարում է նրանց, այլ՝ օգնում: Նրանք հանգում են ֆրանսիացի հայտնի բնագետ, գիտնական, փիլիսոփա, աստվա-

ծաբան Պիեռ Տեյար դե Շարդենի եզրահանգմանը. «Մենք ոչ թե մարդկային էակներ ենք, որ հոգեւոր փորձառություն ունենք, այլ հոգեւոր էակներ՝ մարդկային փորձառությամբ»:

Գոյություն ունի նաեւ այլ ճանապարհ. Հովսեփը եւ Մարիամը, ինչպես հաղորդում է Ղուկաս Ավետարանիչը, ճամփա ելան դեպի Բեթղեհեմ՝ իրենց քաղաքացիական պարտքը կատարելու՝ արձանագրվելու Օգոստոս կայսեր կողմից հռչակված մարդահամարին եւ վճարելու հարկերը: Այսու, դեպի հավատք ճանապարհը անցնում է նաեւ կյանքի առօրյա ապրումով՝ իբրեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ՝ մեր քաղաքացիական պարտքը կատարելով, իբրեւ ծնողներ՝ մեր երեխաների հանդեպ խնամք տանելով, իբրեւ մեր ընտանիքի զավակներ՝ մեր ծնողներին պատվելով, հարեւանին շնորհակալություն հայտնելով, միմյանց սիրելով, պարզապես տանից դուրս գալով եւ մարդկանց ջերմությամբ ողջունելով:

Այս բոլոր ճանապարհներին Աստված կարող է հայտնվել մեզ, հրաշքներ գործել մեր կյանքում եւ առաջնորդել դեպի Բեթղեհեմյան մսուր՝ մեր հավատքի օրրան: Մարիամն ու Հովսեփը բնավ չէին էլ մտածում, որ յոթ հարյուր տարի առաջ Միքիա մարգարեն վկայել էր՝ Փրկիչը պիտի ծնվի Բեթղեհեմում: Ո՛չ, իրենց քաղաքացիական պարտքն էին կատարում. գնում էին Բեթղեհեմ, եւ այդ ճանապարհին Աստված հրաշք գործեց եւ աշխարհին պարգեւեց Փրկչին Բեթղեհեմ քաղաքում՝ հացի քաղաքում՝ մարդկությանը հավիտենական հաց պարգեւելով:

Եւ վերջապես, կա նաեւ մեկ այլ ճանապարհ, որը հովիվների ճանապարհն է: Հովիվները գնացին Բեթղեհեմ Աստվածային հայտնության արդյունքում: Նրանք ուղղակի տեսիլք ստացան Աստծուց, երբ հրեշտակներն ավետում էին. «Ձեզ համար այսօր ծնվել է Փրկիչ Դավթի քաղաքում» (Ղուկ. Ա. 11): Նման հայտնություններ հաճախ չեն պատահում. դրանք միայն սրտով մաքուրներին է տրվում, ինչպես ասվում է երանիների մեջ. «Երա՛նի սրտով մաքուրներին, քանզի նրանք Աստծուն պիտի տեսնեն» (հմմտ. Մատթ. Ե. 8): Հովիվները մեծ հավատ ստացան գերբնական հոգեւոր փորձառության միջոցով: Սա իրական ճանապարհն է դեպի Բեթղեհեմ:

Մոգերը կարող էին կասկածի տակ դնել հովիվների փորձառությունը, հովիվներն էլ իրենց հերթին թերագնահատել մոգերի իմացական ճամփորդությունը, սակայն ո՛չ մոգերը, ո՛չ հովիվները որեւէ պատճառ չունեին՝ արհամարհանքով նայելու Ս. Մարիամի ու Հովսեփի ընտանեկան ճամփորդությանը, ովքեր գնում էին արձանագրվելու եւ վճարելու իրենց հարկերը: Հավատքի կյանքի ճամփորդության ընթացքում յուրաքանչյուրն ընթանում է իր ճանապարհով. սակայն, կարեւորն այն է, որ ճամփորդության ավարտին բոլորս միասին հայտնվենք Բեթղեհեմում, այլ ոչ թե անհավատության փակուղու մեջ, եւ լինենք տարբեր, քան ճանապարհի սկզբին էինք:

2015 թ. մեր ճամփորդությունը նոր է սկսվել: Վաղը կլինենք Բեթղեհեմում, կերկրպագենք մանուկ Հիսուսին, սակայն այնտեղ երկար չպիտի մնանք: Նորից պիտի ճամփա ընկնենք, Նրա հետ դեռ Հորդանան պիտի գնանք, այնուհետ՝ Երանիների եւ Թաբոր լեռը, Գալիլիայի ծովակը, ապա Սամարիայով անցնելով՝ Երուսաղեմ, պիտի բարձրանանք Գեթսեմանի պարտեզ, Գողգոթա ու կանգնենք թափուր գերեզմանի առջեւ, վերջապես բարձրանանք Համբարձման լեռը...

Այս տարի առանձնահատուկ է մեզ՝ հայերիս համար, քանզի պիտի ոգեկոչենք Հայոց Ցեղասպանության հարյուրերորդ տարելիցը: Մի՛ մոռացեք, որ մեր նահատակների մի մասը մահացավ հենց ճանապարհին: Նրանց հավատքի ճանապարհը անցնում էր Դեր Զորի միջով եւ նրանց ոսկորները, որոնք այսօր թաղված են այդ անապատի ավազների մեջ, հուշում են, որ քրիստոնյա մեր ժողովուրդը ուրույն մի ճանապարհ է բացել դեպի Բեթղեհեմ, որը նրա հավատքի վկայությունն է՝ արյան վկայությունը: Սա «դեպի երկինք բարձրացող» բացարձակ ճանապարհն է, որով մեզանից յուրաքանչյուրը պետք է պատրաստ լինի մեր հավատքի, հայրենիքի ու հայության համար արյամբ վկայել:

Սիրելինե՛ր, մաղթում եմ, որ այս տարի հոգեւոր ճամփորդության սքանչելի տարի լինի բոլորիս համար: Թող որ բացահայտենք շատ ու շատ հորիզոններ եւ երբեք չվախենանք ճանապարհի դժվարություններից: Հիրավի, երբ Մանուկ Հիսուսի պայծառ ու լուսավոր դեմքը տեսնենք, ճանապարհի մեր հոգնությունը անմիջապես կանցնի, եւ հոգեւոր ուրախության մեջ օրհնություն պիտի վերառաքենք առ Աստված՝ այն ամենի համար, որ լսեցինք ու տեսանք. ամեն: